ՄԱՍ Ի-Բ

Հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները

Միջնաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները և ցուցանիշները

ՀՀ 2013-2015թթ միջնաժամկետ ծախսային ծրագրի (այսուհետև՝ ՄԺԾԾ) և ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման ընթացքում ՀՀ կառավարությունն առաջնորդվել է ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած ՀՀ կառավարության գործունեության ծրագրով ամրագրված սկզբունքներով: ՄԺԾԾ-ի համաձայն ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերության ցուցանիշը 2013-2015թթ կտատանվի 22.07%-22.65% սահմաններում, իսկ ներքին ռեսուսների հաշվին ձևավորվող եկամուտների դեպքում՝ 21.67%-22.47% սահմաններում: Հիմք ընդունելով պետական բյուջեի եկամուտների կանխատեսումային իրական ծավալները, ՀՀ կառավարությունը ծրագրել է 2013-2015թթ ծախսերի միջին տարեկան մակարդակը պահպանել շուրջ 24.7%-ի սահմաններում:

Ստորև բերված աղյուսակ 1.1-ում ներկայացված են 2011-2013թթ հարկաբյուջետային քաղաքականությունն արտացոլող ամփոփ ցուցանիշները:

Աղյուսակ 1. 1 2011-2013թթ հարկաբյուջետային ամփոփ ցուցանիշները

Ցուցանիշներ	2011թ փաստացի[1]	2012թ ծրագիր[2]	2013թ նախագիծ
Ա. Արտահայտված մլրդ դրամով			
1. Ընդամենը եկամուտներ	859.9	911.6	1,032.8

[1] 2011-2013թթ համադրելիությունն ապահովելու նպատակով՝

ա) 2011 թվականի փաստացի ցուցանիշներում ներառված չեն ՀՀ 2011թ պետական բյուջեից ծախս-եկամուտ գործառույթի եղանակով ստացված եկամուտները և կատարված ծախսերը, ինչպես նաև 2012, 2013թթ չնախատեսված արտաբյուջետային հաշիվների 2011 թվականի փաստացի եկամուտներն ու ծախսերը:

բ) 2011, 2012թթ հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով փաստացի/ծրագրային ցուցանիշներում ներառված են պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով համապատասխան մուտքերը:

[2] «ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված ցուցանիշները և դրանց հաշվարկման հիմքում դրված ՀՆԱ-ի մեծությունը:

այդ թվում՝			
- ներքին եկամուտներ	801.8	895.3	1,015.3
որից՝			
Հարկեր և պետական տուրքեր	774.7	874.3	993.1
2. Ընդամենը ծախսեր	963.4	1,044.1	1,152.6
այդ թվում՝			
- ընթացիկ ծախսեր	794.5	897.5	955.2
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	168.9	146.6	197.4
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	103.5	132.5	119.8
Բ. Արտահայտված ՀՆԱ-ի նկատմամբ %-ով			
1. Ընդամենը եկամուտներ	22.77	21.61	22.76
որից՝			
- ներքին եկամուտներ	21.23	21.22	22.38
որից՝			
հարկեր և պետական տուրքեր	20.51	20.73	21.89
2. Ընդամենը ծախսեր	25.51	24.75	25.40
այդ թվում՝			
- ընթացիկ ծախսեր	21.04	21.27	21.05
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	4.47	3.48	4.35
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	2.74	3.14	2.64
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	3,776.4	4,218.6	4,537.3

Հիմք ընդունելով ՀՆԱ-ի 22.76%-ի չափով կանխատեսված ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի եկամուտների մակարդակը և ելնելով ՀՆԱ-ի 2.64%-ի չափով դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորություններից, ՀՀ կառավարությունը ծրագրում է 2013 թվականին ապահովել ծախսերը ՀՆԱ-ի 25.4%-ի կամ 1,152.6 մլրդ դրամի չափով:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրավորվող հարկաբյուջետային ցուցանիշներն ընդհանուր առմամբ համահունչ են ՄԺԾԾ-ով հաստատված միջնաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներին:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով առաջարկվող բյուջետային եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարը ՄԺԾԾ-ով նախատեսվածի դիմաց ավելացել է 31.6 մլրդ դրամով, պահպանելով դեֆիցիտի մակարդակը:

Եկամուտների դեպքում նշված տարբերությունը քննարկելիս հարկ է հաշվի առնել 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող օրենսդրական փոփոխությունների՝ զինծառայողներին, նրանց հավասարեցված անձանց և փրկարարական ծառայության ծառայողներին եկամտային հարկի դաշտում ներառելու, ինչպես նաև ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պարտավորության առաջացման դեպքում պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիաները և սուբվենցիաները

ավելացված արժեքի հարկով հարկելու արդյունքում[3] ակնկալվող լրացուցիչ մուտքերը շուրջ 31.1 մլրդ դրամի չափով:

Եկամուտների գծով ՄԺԾԾ-ով հաստատված մուտքերի նկատմամբ փոփոխություն են կրել նաև պաշտոնական դրամաշնորհները (նվազել են 0.5 մլրդ դրամով) և այլ եկամուտները (ավելացել են 1.0 մլրդ դրամով): Պաշտոնական դրամաշնորհների դեպքում ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշի նկատմամբ Նախագծով առաջարկվող տարբերությունը պայմանավորված է պաշտոնական դրամաշնորհների կազմի և ծավալի ճշգրտմամբ, ինչպես նաև հաշվարկների հիմքում դրված 1 ԱՄՆ դոլարի և 1 եվրոյի դրամային փոխարժեքների փոփոխություններով (նշված ցուցանիշները ՄԺԾԾ-ի հաշվարկներում կազմել են համապատասխանաբար 390.95 և 522.15 դրամ, Նախագծում՝ 405.52 և 524.38 դրամ): Յուրաքանչյուր դեպքում պաշտոնական դրամաշնորհների նախատեսվող գումարները ծրագրվում են ծրագրավորման պահին առկա համաձայնագրերի կամ դոնորների հետ ձեռքբերված նախնական համաձայնությունների հիման վրա:

ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշից 2013 թվականի համար այլ եկամուտների գծով ծրագրված մուտքերի շեղման պատճառներից մեկը ևս հաշվարկների հիմքում դրված 1 ԱՄՆ դոլարի և 1 եվրոյի դրամային փոխարժեքների փոփոխություններն են: Բացի այդ որոշիչ է եղել նաև պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարների կազմի փոփոխությունը՝ պայմանավորված ՄԺԾԾ հաստատումից հետո կնքված վարկային նոր պայմանագրերի առկայությամբ:

[3] Համապատասխան ՀՀ օրենքների նախագծերը գտնվում են շրջանառության մեջ: